ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
գործուղման արդյունքների մասին

1. Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոնը.

Վահե Ղազարյան, ՀՀ ներքին գործերի նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Թուրքեստան, 2023թ. սեպտեմբերի 13-ից 16-ը

3. Հրավիրող կողմ.

Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն

4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների ՆԳ նախարարների Խորհրդի նիստին

5. Քննարկված թեմաները.

Օրակարգում ընդգրկված էին ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում անձանց միջպետական հետախուզման, ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման, համացանցում թմրամիջոցների անօրինական շրջառության հակազդման, կիբերհանցավորության դեմ պայքարի, երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի օբյեկտներում հասարակական կարգի ապահովման և այլ հարցեր:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Նիստի ընթացքում իմ ելույթում անդրադարձա Ներքին գործերի նախարարության կազմավորման ընթացքին, Պարեկային ծառայության կայացմանն ու քրեական ոստիկանության ստորաբաժանումների կազմավորմանը և բարեփոխումների շրջանակում իրականացվող այլ գործընթացների:

Ուշադրություն հրավիրվեց կիբերհանցավորության աճի միտումներին ու համացանցով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի տարածման խնդիրներին և ընդգծվեց, որ այդ ոլորտում պայքարի արդյունավետության բարձրացման համար ԱՊՀ մասնակից պետությունների իրավապահ մարմինների մշտական և անընդմեջ օպերատիվ կապին զուգահեռ անհրաժեշտ է միասնական միջոցներ ձեռնարկել և մշակել փոխհամաձայնեցված մոտեցումներ,

մասնավորապես՝ ձևավորել ոլորտի մասնագիտացված ստորաբաժանումներ ԱՊՀ մասնակից պետությունների ՆԳՆ շրջանակում:

Օրակարգում ընդգրկված ինտերնետ ցանցում թմրամիջոցների անօրինական շրջանառության հակազդման ոլորտում փորձի փոխանակման և դրա արդյունավետության բարձրացման միջոցների վերաբերյալ հարցով, որի նախաձեռնողը ՀՀ ՆԳ նախարարությունն էր, հանդես եմ եկել առանձին ելույթով: Նշված հարցով ԱՊՀ մասնակից պետությունների ներքին գործերի նախարարների Խորհրդի անդամները ստորագրել են համապատասխան որոշում: Որոշումը չի ստորագրել Ադրբեջանական Հանրապետության ՆԳ նախարարությունը:

7.Հանդիպման ընթացքում ընդունված որոշումներ, պայմանավորվածություններ, ստորագրված փաստաթղթեր.

Քննարկված բոլոր հարցերով ստորագրվել են համապատասխան որոշումներ:

ԱՊՀ մասնակից պետությունների ներքին գործերի նախարարների Խորհուրդը որոշում է կայացրել հաջորդ նիստն անցկացնել Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում:

ՀՀ ներքին գործերի նախարար **Վահե Ղազարյան**

«27» սեպտեմբերի 2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ ներքին գործերի նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — ՀՀ վարչապետի 24,08,2023թ N 867-Ա որոշում, ՀՀ ներքին գործերի նախարարի 15.08.2023թ. թիվ 679-Ա հրաման
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
   ՀՀ ՆԳ նախարար Վահե Ղազարյան,
   (թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)
4. Գործուղման վայրը — Ղազախստանի Հանրապետության Թուրքեստան քաղաք
5. Գործուղման ժամկետը — 13.09.2023թ.-16.09.2023թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ — ՀՀ պետ. բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսեր
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցվող տարբերակը)

	ա.	փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
	բ.	գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Վահե Ղազարյան		Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	բիզնես դաս		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	590357		**590.4**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	**$134.00**		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,737		
	Օրերի քանակը	2		
	Ընդամենը (դրամ)	103,475	0	**103.5**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	**$86.00**		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	33,205		
	Օրերի քանակը	2		
	Ընդամենը (դրամ)	66,409	0	**66.4**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	**$43.80**		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	16,911		
	Օրերի քանակը	1		
	Ընդամենը (դրամ)	16,911	0	**16.9**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	**$45.00**		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	17,375		

	Օրերի քանակը	2		
	Ընդամենը (դրամ)	34,749	0	**34.7**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			**0.0**
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**811.9**	**0.0**	**811.9**

ՀՀ ներքին գործերի նախարարություն